

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԲԱՆԱԳԵՏ-ԺՈՂՈՎՐԴԱԳԵՏԸ
(Վերժինե Սվազյանի ծննդյան 80-ամյա հոբելյանի առթիվ)



Բանագետ, բանահավաք, ցեղասպանագետ, բանասիրական գիտությունների դոկտոր Վերժինե Սվազյանը ծնվել է 1934 թ. Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում՝ Հայոց ցեղասպանությունից մազապուրծ գրող, հասարակական գործիչ Գառնիկ Սվազյանի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է տեղի Պողոսյան ազգային վարժարանում, ապա ֆրանսիական թեքումով դպրոցում:

1947 թ. Սվազյանների ընտանիքը ներգաղթել է հայրենիք:

1956 թ. Վ. Սվազյանը գերազանցությամբ ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմա-մալեզվագրական բաժինը: Մանկավարժական աշխատանքի հետ միաժամանակ նա «Սովետական Հայաստան» ամսագրի և այլ պարբերականների էջերում, նաև ռադիոյով և հեռուստատեսությամբ ներկայացրել է Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկված, տարբեր երկրներում գոյատևած, ապա հայրենիքում հանգրվանած հայրենադարձների ավանդական բարբառները, նրանց բառ ու բանը, կյանքն ու կենցաղը, ինչպես նաև նրանց կրթական ու մասնագիտական աննախադեպ վերելքը հայրենի հողի վրա:

Վ. Սվազյանը, սկսած 1955 թվականից՝ շուրջ 60 տարիների ընթացքում, անձնական նախաձեռնությամբ և արևմտահայի արյան կանչով թաղից թաղ, գյուղեգյուղ շրջելով, գրանցել և վերականգնել է մեր զավթված երկրի՝ Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի հայության բանավոր մշակույթը՝ տարբեր բարբառներով ստեղծված ժողովրդական բանավոր նշխարները, ինչպես նաև Հայոց ցեղասպանության ականատես-

ներից գրառել, ձայնագրել, տեսագրել և ուսումնասիրել է նրանց հաղորդած պատմամիաստագրական վկայությունները:

Խոստումնալից հետազոտողը 1958 թ. աշխատել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում նախ՝ որպես լաբորանտ, ապա ասպիրանտական ուսումնառության տարիներին եղել է Մ. Աբեղյանի անվան անհատական թոշակառու: Միբիրյան արտորից նոր վերադարձած երախտաշատ ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանը, տեսնելով և գնահատելով Մուսա լեռան խրթին բարբառով գրառած բանահյուսական տարաբնույթ նյութերի բարձր մակարդակը, ստանձնել է նրա գիտական ղեկավարությունը և առաջարկել զբաղվել XIX դարի արևմտահայ բանահավաք-ազգագրագետ «Սարգիս Հայկունու կյանքն ու գործը» թեմայով: 1965 թ. Վ. Սվազյանը հաջողությամբ պաշտպանել է իր թեկնածուական ատենախոսությունը, իսկ մենագրությունը լույս է տեսել 1973 թվականին:

1960 թ. մինչև օրս նա աշխատում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, իսկ 1996-2004 թթ.՝ միաժամանակ նաև ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում, որտեղ արդեն սկսել է տեսագրել (օպերատոր՝ Գալուստ Հալաջյան) և ուսումնասիրել ականատեսների հաղորդած վկայությունները: Վ. Սվազյանը կազմել ու խմբագրել է «Հայ ժողովրդական հեքիաթներ» գիտական բազմահատորյակի «Արցախ-Ուտիք» (հ. VI, Ե., 1973), «Տարոն-Տուրուբերան» (հ. XII, Ե., 1984), «Վան-Վասպուրական» (հ. XV, Ե., 1998) պատմաազգագրական շրջանների հեքիաթները:

1984 թ. լույս է տեսել Վ. Սվազյանի «Մուսա լեռ» (Ե., 1984) աշխատությունը, որտեղ հեղինակը, հավատարիմ մնալով Մուսա լեռան (Սվեդիա) խրթին բարբառի երեք ձյուղավորումների ինքնատիպ նրբերանգներին, փրկել է արդեն իսկ անհետացող այդ բարբառով ստեղծված բանահյուսական նշխարները: Հեղինակն արժանացել է ՀՍՄՀ ԳԱ նախագահության «Գովեստագրին», «Մուսա լեռ» Հայրենակցական Ընդհանուր Միության (Բեյրութ) «Պատուաւոր Մուսալեռցի» ոսկե մեդալի (1985): Նա նաև կազմակերպել ու խմբագրել է Բնիկ մուսալեռցի Գրիգոր Գյոզալյանի «Մուսա լեռան ազգագրությունը» (Ե., 2001) գիրքը:

Վ. Սվազյանի «Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը» (Ե., 1994) ստվարածավալ աշխատությունն ամփոփում է Կիլիկիայի և նրա շրջակայքի 50 տեղավայրերի (Զեյթուն, Հաճըն, Մարաշ, Այնթապ, Քեսապ, Բեյլան, Ադանա, Մերսին, Տարսոն, Միս, Մուսա լեռ և այլն) բանավոր մշակույթը՝ բազմաբովանդակ կողմերով ու բարբառային նրբերանգներով: Հեղինակը պատմական փաստերի և իր գրառած ժողովրդագիտական նյութերի հիման վրա ներկայացրել է Հայկական Կիլիկիայի 300-ամյա փառահեղ պետականության շրջափուլերը, կիլիկիահայության հերոսական անցյալը՝ ընդհուպ Արցախյան ազատամարտ:

Նրա գրչին է պատկանում նաև «Մեծ եղեռն. Արևմտահայոց բանավոր վկայություններ» (Ե., 1995) աշխատությունը, որտեղ, ըստ վերապրողների ծննդյան վայրերի, դասակարգված և ուսումնասիրված են նրանց հաղորդած պատմական վկայությունները:

Բարձր գնահատելով Վ. Սվազյանի վերոհիշյալ երեք եզակի և աննախադեպ աշխատությունների հիման վրա ներկայացված «Կիլիկիայի հայոց բանավոր մշակույթը» ինքնատիպ մենագրությունը (զեկուցագրի տեսքով)՝ 1995 թ. նրան շնորհվեց բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան: Մույն աշխատությունը բարձր է գնահատել Մասնագիտական խորհրդի նախագահ, ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը՝ նշելով. «Սվազյանի

բազմամյա բանահավաքական, բանագիտական աշխատանքն իր մեթոդական նոր մոտեցումներով և ծանրակշիռ արդյունքներով նոր խոսք է հայ բանագիտության ասպարեզում: Նա իր բանահյուսական հարուստ ու բազմաժանր նյութերի և Հայոց ցեղասպանության ականատես վկաների պատմած հուշերի իմաստավորմամբ ու մանրագին քննարկումներով իր նախադեպը չունի ընթացիկ հարյուրամյակի՝ XX դարի արևմտահայ բանավոր ավանդության հավաքման և ուսումնասիրման պատմության մեջ: Հիշյալ աշխատությունների համար «Մուսա լեռ» հայրենակցական բարեգործական միությունը նրան արժանացրել է «Պատվոգրի» (1995), իսկ «Զեյթուն» պատմամշակութային միությունը՝ «Պատվավոր Զեյթունցի», նաև «Հաճըն» հայրենակցական միությունը՝ «Պատվավոր Հաճընցի» կոչումների:

Փաստավավերական բացառիկ արժեք են ներկայացնում դերգորյան թուրքալեզու երգերը, որոնք բանահավաք-բանագետը մեծ դժվարությամբ և համբերությամբ որոնել, հայտնաբերել և թարգմանաբար ներկայացրել է իր « Մեծ եղեռնը արևմտահայոց հուշապատումներում և թուրքալեզու երգերում» (Ե., 1997-1999 թթ., հայերեն, ռուսերեն, անգլերեն, իսկ թուրքերենը՝ 2005 թ. Ստամբուլում) ուսումնասիրության մեջ: Այն տեղադրվել է նաև համացանցում՝ մեծ աղմուկ բարձրացնելով թուրք հասարակության շրջանում:

Արևմտահայ մշակույթի գիտակ Վ. Սվազյանը 1996 թ. հրավիրվել է մասնակցելու Կ. Պոլսո Հայոց Պատրիարքական աթոռի հիմնադրման 535-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին: Առիթից օգտվելով՝ այնտեղ նա սկսել է գրի առնել տեղի հայ համայնքի արդեն իսկ անհետացող բանավոր ավանդության նշխարները՝ փրկելով կորստից: Սույն գրքի խմբագիր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանի բնորոշմամբ, Վ. Սվազյանի «հոգեռանդ նվիրումի շնորհիվ» լույս է տեսնում «Պոլսահայոց բանահիստորիկներ» (Ե., 2000) արժեքավոր աշխատությունը, որի համար Փարիզի «Արարատ» Հայագիտական ակադեմիան հեղինակին շնորհել է պրոֆեսորի կոչում (2004), Մոնրեալում Պոլսահայ մշակութային միությունը՝ «Ոսկե մեդալ» (2005), Միքիայում ՀԲԸՄ Հալեպի մասնաճյուղը՝ «Մեսրոպ Մաշտոց» հուշամեդալ (2005), իսկ Ալեքսանդրիայի Հայոց քաղաքական ժողովը՝ «Նեղոսի բանալի» ոսկե հուշամեդալ (2006):

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից լույս տեսած «Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ» (Ե., 2000) ստվարածավալ և արժեքավոր աշխատությունն ընդգրկում է պատմական Հայաստանից, Կիլիկիայից, Անատոլիայի հայաբնակ գավառներից տարագրված և աշխարհի տարբեր երկրներում գոյատևած, այնուհետև մայր հայրենիքում հանգրվանած հայրենադարձներից Վ. Սվազյանի գրառած փաստավավերական հուշ-վկայությունները՝ հուշապատումներ, պատմական իրադարձությունների, դեպքերի ու դեմքերի վերաբերյալ ժողովրդական փաստալից գրույցներ, երգեր ու վիպերգեր, որոնց պատմաճանաչողական արժեքի և փաստագրական հավաստիության մասին հիշյալ գրքի խմբագիր Ս. Հարությունյանը իրավացիորեն գրել է. «Ականատեսների հուշապատումներն ու մանավանդ թրքալեզու երգերն ունեն պատմական վավերագրերի արժեք ոչ միայն այդ ժամանակաշրջանի մեր ողբերգական պատմությունը ճիշտ հասկանալու և ըմբռնելու իմաստով, այլև Հայ Դատի պաշտպանությունն առավել հիմնավորելու և հատկապես թուրք ու թուրքամետ պատմաբաններին հենց թուրքալեզու երգերով ու նրանցում հնչող մեղադրանքներով հակահարված տալու առումով» (էջ 12): Այդ աննախադեպ աշխատության համար Վ. Սվազյանն արժանացել է ՀՀ ԳԱԱ նախագահության «Պատվոգրին»

(2000), սփյուռքի Թեքեյան մշակութային միության «Հայկաշէն Ուզունեան» գիտական-բանասիրական մրցանակին (2002), ինչպես նաև ՀՀ ԳԱԱ նախագահության և «Ճշմարիտները հայերի համար» միջազգային կոմիտեի «Ֆրիտյոֆ Նանսեն» հուշամեդալին (2003):

Ուշագրավ է Վ. Սվազյանի «Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը» խորագրով ինքնատիպ ուսումնասիրությունը, որը լույս է տեսել վեց լեզուներով (Ե., 2003-2005, հայ., անգլ., ֆր., գերմ., ռուս., իսկ թուրքերենը՝ Ստամբուլ): Հեղինակը, ականատես վերապրողների հաղորդած հուշերն ու պատմական բնութի ժողովրդական երգերը համադրելով պատմական իրադարձությունների հետ, ներկայացրել է Հայոց ցեղասպանության ամբողջ ընթացքը: Ցեղասպանագիտության ասպարեզում ունեցած վաստակի համար Վ. Սվազյանին շնորհվել են ՀՀ կառավարության «Հուշամեդալ» (2005), «Հայոց ցեղասպանության ճանաչման գործում նշանակալի ավանդ ներդնելու համար»՝ ՀՀ Նախագահի առաջին մրցանակ և «Ոսկե հուշամեդալ» (2006), ինչպես նաև «Հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտ» հուշամեդալ (2009):

«Համաշխարհային ֆոլկլոր և ժողովրդական կենցաղ» խորագիրը կրող համապարփակ քառահատոր հանրագիտարանում Վ. Սվազյանին է պատկանում «Հայաստան» ծավալուն և բազմաբովանդակ անգլերեն հոդվածը (*Armenia. "The Greenwood Encyclopedia of World Folklore and Folklife."* William M. Clements, ed. (4 volumes). Volume 2: Southeast Asia and India, Central and East Asia, Middle East. Westport (Connecticut), London, 2006, pp. 357-372): Այնտեղ հայ ժողովրդի բանահյուսությունը ներկայացված է պատմական հենքի վրա՝ սկսած հազարամյակների խորքից, հասցնելով մինչև մեր օրերը: Հանրագիտարանային այս ընդգրկուն հոդվածում գաղափար է տրվում նաև հայ ժողովրդի ճարտարվեստի, մանրանկարչության, երգ ու պարի, թատրոնի, ասեղնագործության, գորգագործության, ազգային տարազի և կյանք ու կենցաղի մասին: Հոդվածն օժտված է լուսանկարներով, ինչպես նաև հայագիտական հարուստ մատենագիտությամբ: Վ. Սվազյանի ծավալուն այդ հոդվածը ծանրակշիռ ներդրում է հայ ժողովրդի բանահյուսությունն ու կենցաղը համաշխարհային հեղինակավոր հանրագիտարանի միջոցով առաջին անգամ աշխարհին ներկայացնելու առումով, որի համար Ամերիկյան կենսագրական ինստիտուտը նրան շնորհել է *"The Great Mind of the 21st Century"* («XXI դարի մեծագույն միտք») տիտղոս և հուշամեդալ (2008):

Այդ ամբողջ ընթացքում նվիրյալ մտավորականը, շարունակելով իր նպատակադրած մեծ գործը, մշտապես որոնել-գտել է Հայոց ցեղասպանության ականատես վերապրողներին ոչ միայն Հայաստանի տարբեր շրջաններում, այլ նաև արտասահմանում (Հունաստան, Ռուսաստան, Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա, Ավստրիա, Կանադա, ԱՄՆ, Եգիպտոս, Լիբանան, Սիրիա-Դեր Զոր, Թուրքիա): Հեղինակի գրի առած՝ մեր զավթված երկրի ավելի քան 150 տեղավայր ներկայացնող 700 միավոր վկայությունները՝ ծավալուն գիտական ուսումնասիրությամբ և բազմաբնույթ տեղեկատվական ցուցիչներով ու ծանոթագրություններով, ամփոփված են նրա «Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ» (Ե., հայ.՝ 2-րդ համալրված հրատ., 2011, անգլ.՝ 2011, իսկ թուրքերենը՝ 2013, Ստամբուլ) պատմաքաղաքական բացառիկ արժեք ունեցող ստվարածավալ եռալեզու հատորների մեջ, որոնք լույս են տեսել ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, նաև Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհուրդների որոշմամբ:

Հայերեն և անգլերեն հատորների վերջում տեղադրված է «Սվազյան գերդաստանի հավատամքը» վավերագրական տեսաֆիլմը, որը նվիրված է

XX դարի ընթացքում Սվազլան գերդաստանի իրարհաջորդ երեք սերունդների ազգանպաստ և հայրենանպաստ գործունեությանը՝ ընդգրկելով հայ ժողովրդի համար բախտորոշ մի ժամանակաշրջան: Ֆիլմում օգտագործված են արխիվային բացառիկ արժեք ներկայացնող տեսանյութեր և Հայոց ցեղասպանության ակնատեսների կենդանի վկայություններ: Ֆիլմի կուռ և բովանդակալից սցենարի հեղինակն ու ռեժիսորն է բազմավաստակ ճանաչված լրագրող Լատուրա Մինասյանը: Ֆիլմի երաժշտական ձևավորողը Կարեն Խառատյանն է: Կարդում է Հայաստանի վաստակավոր արտիստ Սարգիս Նաջարյանը:

Երեք լեզուներով հրատարակված վերոնշյալ ծանրակշիռ աշխատության համար Հայոց փիլիսոփայական ակադեմիան Վ. Սվազլանին պարգևատրել է « Եռամեծ փիլիսոփա Դավիթ Անհաղթ» Մեծ հուշամեդալով (2011), իսկ Հայաստանի Հանրապետության Նախագահը « ՀՀ ԳԱ ակադեմիայի հիմնադրման 70-ամյակի կապակցությամբ գիտության և կրթության բնագավառում մատուցած ակնառու ծառայությունների համար» նրան շնորհել է « Մովսես Խորենացի» մեդալ (2013):

Վ. Սվազլանը իր անձնական և գիտաժողովային այցելությունների ընթացքում եղել է նաև ԱՄՆ-ում (1979, 1989, 2001, 2008). տեղի հայ համայնքից գրի է առել ժողովրդական նորահայտ, ինքնատիպ ու բազմազան նյութեր, որոնք ամփոփել է « Ամերիկահայոց բանավոր մշակույթը» առաջիկայում հրատարակության պատրաստվող իր աշխատության մեջ:

Վաստակաշատ գիտնականը մասնակցել է հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովների, նաև զեկուցումներով հանդես եկել սփյուռքահայ համայնքներում՝ բանագիտությանը, ժողովրդագիտությանը, ցեղասպանագիտությանն ու Հայոց հարցին առնչվող թեմաներով:

Վ. Սվազլանը 500-ից ավելի գիտական և հրապարակախոսական հրատարակությունների, ընդ որում՝ 25 գրքերի հեղինակ է, որոնք լույս են տեսել Հայաստանում և արտերկրում: Ավելի քան կեսդարյա տքնաջան նվիրումով և իր ծանրակշիռ վաստակով բանասիրական գիտությունների դոկտոր, բանագետ, ժողովրդագետ Վերժինե Սվազլանը ոչ միայն անհետ կորստից փրկել և զալիք սերունդներին է ավանդել մեր զավթված Երկրի մշակութային բանավոր հարստությունը (ավելի քան 10 հազար միավոր նյութ), այլև տարբեր լեզուներով աշխարհին ու մարդկության արդար դատին է ներկայացրել հայ ժողովրդի պատմական հավաքական հիշողությունը:

Որպես ամփոփում՝ տեղին է վերհիշել Վ. Սվազլանի դոկտորական ատենախոսության ընդդիմախոս, բանասիրական գիտությունների դոկտոր Պիոն Հակոբյանի 1995 թ. հնչեցրած հետևյալ գնահատականը. «...Կարելի է պատկերացնել, թե բանասիրական և պատմագիտական ինչ վիթխարի ժառանգությունից կզրկվեր հայրենի գիտությունը, եթե ճակատագիրն ինքն ասպարեզ չհաներ Վերժինե Սվազլանի նման ըստ ամենայնի պատրաստված քննախնդիր ու նվիրված բանագետ բանահավաքին»:

Ուստի շնորհավորում ենք Հայաստանում և սփյուռքում լայն ճանաչում ու հարգանք վայելող վաստակյալ բանագետ-ցեղասպանագետ Վերժինե Սվազլանին իր բազմաբեղուն հոբելյանի կապակցությամբ և մաղթում նորանոր ստեղծագործական արարումներ:

ԲԱԼՈՑԱՆ Հ. Ս.

Բանասիրական գիտությունների թեկնածու